MOORE

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Համախմբված Ֆինանսական հաշվետվություններ

և Անկախ աուդիտորի եզրակացություն

31 դեկտեմբերի 2025թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն	6
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն (շարունակություն)	7
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն	8
Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն	9
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն	10
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն (շարունակություն)	11
Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	12

Մուր Հայաստան
ՀՀ, ք. Երևան Ն. Գոգոլի 12-14$_2$.
78 տարածք, 0069
Հեռ. + 374 95 90 19 49

Moore Armenia
N. Gogoli 12-14 bld.,78 office,
Yerevan, Armenia, 0069
Tel. + 374 95 90 19 49
www.moore-armenia.am

Անկախ աուդիտորի եզրակացություն

«Երևանի Պետական Համալսարան» Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Երևանի Պետական Համալսարան» Հիմնադրամի (Հիմնադրամ) և նրա դուստր կազմակերպությունների (միասին՝ Խումբ), համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա Եկամտի և ծախսերի մասին համախմբված հաշվետվություն, զուտ ակտիվներում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով, կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները տալիս են Խմբի 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համախմբված ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքների ու համախմբված դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են համախմբված ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և

այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Խմբի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Խմբի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Խումբը ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:

- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Խմբին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Ռոբերտ Մելիքյան, Ph.D, ACCA

Տնօրեն՝

Քնար Պետրոսյան, FCCA

Աուդիտի գործընկեր՝

29 հունիս 2026թ.

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	82,452,940	80,964,635
Ոչ նյութական ակտիվներ	5	23,187	22,001
Ներդրումային արժեթղթեր	6	4,960,532	509,225
Երկարաժամկետ ավանդներ բանկերում	9	253,552	-
		87,690,211	**81,495,861**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	7	127,356	268,128
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	8	938,678	1,376,827
Կարճաժամկետ ավանդներ բանկերում	9	769,767	770,573
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	10	4,008,807	9,337,239
		5,844,608	**11,752,767**
Ընդամենը ակտիվներ		**93,534,819**	**93,248,628**
Զուտ ակտիվներ և պարտավորություններ			
Կապիտալ և պահուստներ			
Վերագնահատման պահուստ		53,678,189	54,117,251
Կուտակված արդյունք		15,321,933	16,244,950
Պահուստային Կապիտալ		169,894	169,894
Զուտ ակտիվներ		**69,170,016**	**70,532,095**

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	Ծանոթ.	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Պարտավորություններ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	11	6,687,905	5,388,355
Հետաձգված հարկային պարտավորություն	19	12,990,521	12,857,597
		19,678,426	**18,245,952**
Ընթացիկ պարտավորություններ			
Եկամուտներին վերաբերող շնորհներ	11	1,334,988	1,545,685
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	12	2,804,821	2,318,193
Պահուստներ	13	372,892	423,068
Շահութահարկի գծով պարտավորություն		173,676	183,635
		4,686,377	**4,470,581**
		24,364,803	**22,716,533**
Ընդամենը զուտ ակտիվներ և պարտավորություններ		**93,534,819**	**93,248,628**

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 29 հունիս 2026թ.

Ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյան

Գլխավոր հաշվապահ՝ Ռաֆիկ Գրիգորյան

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը կազմող 12-ից մինչև 43-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2025թ.	2024թ.
Ուսման վարձերից եկամուտ	14	7,777,530	7,334,274
Եկամուտ շնորհներից	14	6,746,416	5,321,742
Այլ եկամուտ	15	606,082	741,969
Համախառն շահույթ		**15,130,028**	**13,397,985**
Այլ եկամուտ		2,280	104,916
Աշխատակիցներին հատուցումներ		(11,348,316)	(10,335,182)
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր		(331,647)	(299,907)
Մաշվածություն և ամորտիզացիա		(1,715,265)	(1,674,181)
Հեռահաղորդակցության ծախսեր		(12,876)	(17,178)
Ապահովագրական ծախսեր		(202,724)	(188,841)
Կրթաթոշակի գծով ծախսեր		(191,425)	(223,034)
Գրասենյակային ծախսեր	16	(1,085,721)	(1,046,925)
Արժեզրկման կորուստ	17	(1,346,299)	(149,604)
Այլ ծախսեր		(577,962)	(792,952)
Գործառնական գործունեությունից վնաս		**(1,679,927)**	**(1,224,903)**
Ֆինանսական եկամուտ	18	701,337	845,778
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/(վնաս)		45,208	(74,879)
Վնաս մինչև հարկերը		**(933,382)**	**(454,004)**
Շահութահարկի գծով (ծախս)/փոխհատուցում	19	(428,697)	3,820
Տարվա արդյունք		**(1,362,079)**	**(450,184)**
Այլ համապարփակ արդյունք			
Հիմնական միջոցների վերագնահատում առանց հարկերի		-	8,668,511
Ընդամենը համապարփակ արդյունք		**(1,362,079)**	**8,218,327**

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը կազմող 12-ից 43-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ միասին:

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	Վերագնահատման պահուստ	Պահուստային Կապիտալ	Կուտակված Արդյունք	Ընդամենը
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	**46,273,513**	**169,894**	**15,870,361**	**62,313,768**
Տարվա վնաս			(450,184)	(450,184)
Հիմնական միջոցների վերագնահատում	8,668,511			8,668,511
Վերագնահատված հիմնական միջոցների մաշվածքի փոխանցում	(824,773)		824,773	-
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**54,117,251**	**169,894**	**16,244,950**	**70,532,095**
Տարվա վնաս			(1,362,079)	(1,362,079)
Վերագնահտված հիմնական միջոցների մաշվածքի փոխանցում	(439,062)		439,062	-
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**53,678,189**	**169,894**	**15,321,933**	**69,170,016**

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը կազմող 12-ից 43-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2025թ.	2024թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Տարվա վնաս մինչև շահութահարկը		(933,382)	(454,004)
Ճշգրտումներ՝			
Մաշվածություն և ամորտիզացիա		1,715,265	1,674,181
Հիմնական միջոցների դուրսգրումից վնաս		-	285,333
Ծնորհներից եկամուտ		(6,746,416)	(5,321,742)
Ֆինանսական եկամուտ		(701,337)	(845,778)
Արժեզրկման կորուստ		1,346,299	149,604
Ընթացիկ պահուստների փոփոխություն		(50,176)	27,212
Փոխարժեքային տարբերությունից վնաս/(օգուտ)		(45,208)	74,879
Գործառնական արդյունք նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները		**(5,414,955)**	**(4,410,315)**
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի աճ		(555,135)	(86,052)
Պաշարների (աճ)/նվազում		275,691	(72,211)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր աճ		486,628	571,468
Գործառնական գործունեության համար օգտագործված դրամական միջոցներ		**(5,207,771)**	**(3,997,110)**
Վճարված շահութահարկ		(305,732)	(77,590)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր		**(5,513,503)**	**(4,074,700)**

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	Ծանոթ.	2025թ.	2024թ.
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(1,896,384)	(2,151,320)
Ներդրումային արժեթղթերի ձեռքբերում		(4,451,307)	(500,000)
Բանկային ավանդներ		(252,746)	190,872
Ստացված տոկոսներ		701,337	796,643
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր		**(5,899,100)**	**(1,663,805)**
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Ծնորհներից մուտքեր		6,038,963	5,321,742
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր		**6,038,963**	**5,321,742**
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ նվազում		(5,373,640)	(416,763)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա		45,208	(74,879)
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում		9,337,239	9,828,881
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում	**10,26**	**4,008,807**	**9,337,239**

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը կազմող 12-ից 43-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ միասին:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Խմբի գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Երևանի Պետական Համալսարան» Հիմնադրամը հանդիսանում է «Երևանի Պետական Համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությաբ իրավահաջորդ, որը հիմնադրվել է 2002թ.ին և 2014թ.ի նոյեմբերի 27-ի ՀՀ կառավարության թիվ N 1408-Ն որոշմամբ վերակազմավորել է «Երևանի Պետական Համալսարան» Հիմնադրամի: Հիմնադրամի պետական գրանցման համարն է 273.210.03130: Այն հանդիսանում է «Երևանի Պետական Համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության իրավահաջորդը:

Հիմնադրամի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս ՀՀ կառավարության: Հայաստանի Հանրապետության անունից հանդես եկող կառավարման լիազոր մարմինը ՀՀ կրթության և գիտության նախարարությունն է:

Հիմնադրամի գործունեության հիմնական նպատակներն են՝

- Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության կազմակերպումը,
- Գիտության տարբեր բնագավառներում գիտական, ուսումնամեթոդական և գիտամանկավարժական հետազոտությունների իրականացումը, հայագիտության մակարդակի բարձրացումը,
- Գիտամանկավարժական աշխատողների պատրաստումը և վերապատրաստումը,
- Կրթական ծրագրերի մշակում և իրականացում,
- միջազգային համագործակցության ընդլայնում կրթության և գիտության ոլորտներում:

2025թ. Հիմնադրամի աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 2,568 մարդ (2024թ.՝ 2,899 մարդ):

«Երևանի Պետական Համալսարան» Հիմնադրամի կառավարման մարմիններն Հոգաբարձուների խորհուրդը, Գիտական խորհուրդը, Ռեկտորը:

«Երևանի Պետական Համալսարան» Հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը Հոգոբարձուների խորհուրդն է, որը ձևավորվում է 5 տարի ժամկետով:

Հիմնադրամի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1: Հիմնադրամն ունի մասնաճյուղ, որի գտնվելու վայրն է Հայաստանի Հանրապետություն, Տավուշի մարզ, ք. Իջևան, Ուսանողական 3:

Գործարար միջավայր

Խումբն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Խմբի գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար:

Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Հիմնադրամի գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Խմբի ղեկավարությունը, շարունակաբար վերլուծում է տնտեսական իրավիճակը ներկա միջավայրում: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Խմբի գործունեության վրա կարող են տարբերվել Խմբի ղեկավարության ներկա սպասումներից:

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից: Հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Խումբն իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

2.2 Չափման հիմքեր

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք իրական արժեքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Խմբի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Խմբի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Խմբի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:

2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ լույս են տեսել մի շարք նոր ստանդարտներ, գործող ստանդարտների վերաբերյալ փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել: Խումբը վաղաժամկետ չի ընդունել այդ ստանդարտներից և մեկնաբանություններից որևէ մեկը:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ կիրառելի նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները կընդունվեն Խմբի կողմից՝ դրանց ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող առաջիկա ժամանակաշրջանում:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Խմբի ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև:

- Փոփոխություններ ՖՀՄՍ 9-ում և ՖՀՄՍ 7-ում – Ֆինանսական գործիքների դասակարգման և չափման փոփոխություններ

  Այս փոփոխությունները վերանայում են այն պահանջները, թե երբ կարող է ֆինանսական պարտավորությունը ապաճանաչվել եթե այն մարվում է էլեկտրոնային փոխանցմամբ, ինչպես նաև երբ դրամական հոսքերը կարող են դիտարկվել որպես պարզապես հիմնական գումարի և տոկոսի վճարումներ, և, հետևաբար, ակտիվները կարող են դասակարգվել ամորտիզացված արժեքով:

- ՖՀՄՍ 18 - Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում

  Սույն ստանդարտը կփոխարինի ՀՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ստանդարտին: Թեև բազմաթիվ ստանդարտի պահանջներ կմնան անփոփոխ, նոր ստանդարտը ազդեցություն կունենա Շահույթի կամ վնասի մասին հաշվետվության ներկայացման վրա և, հետևաբար, նաև Դրամական հոսքերի մասին հաշվետվության վրա: Այս նոր ստանդարտը նաև կներառի ոչ ՖՀՄՍ կառավարման կատարողական ցուցանիշների բացահայտում և կարող է ազդել հիմնական ֆինանսական հաշվետվություններում և ծանոթագրություններում համախմբման և ապահամախմբման մակարդակի վրա:

2.6 Դուստր կազմակերպություններ

«Երևանի Պետական Համալսարան» Հիմնադրամի դուստր ընկերությունները ներկայացված են ստորև:

31 դեկտեմբերի 2025թ. Դուստր կազմակերպություն	Մասնաբաժին %	Գրանցման/ հիմնադրման ամսաթիվ	Գործունեության ոլորտ
«ԵՊՀ» հրատարակչություն ՍՊԸ	100%	06.06.2007թ.	Գիտական պարբերականների, դասագրքերի, ուսումնական ձեռնարկների հրատարակչություն
«ԵՊՀ երկրաբանական հետազոտությունների կենտրոն» ՍՊԸ	100%	23.01.2009թ.	Ինժեներական հետազննումներ, սողանքային տեղամասերի ուսումնասիրություն, երկրաֆիզիկական և հանքավայրերի որոնման աշխատանքներ
«ԵՊՀ ուսանողական ծառայություններ» ՍՊԸ	100%	14.03.2016թ.	Ուսանողներին տարբեր ծառայությունների մատուցում

31 դեկտեմբերի 2024թ. Դուստր կազմակերպություն	Մասնաբաժին %	Գրանցման/ հիմնադրման ամսաթիվ	Գործունեության ոլորտ
«ԵՊՀ» հրատարակչություն ՍՊԸ	100%	06.06.2007թ.	Գիտական պարբերականների, դասագրքերի, ուսումնական ձեռնարկների հրատարակչություն
«ԵՊՀ երկրաբանական հետազոտությունների կենտրոն» ՍՊԸ	100%	23.01.2009թ.	Ինժեներական հետազննումներ, սողանքային տեղամասերի ուսումնասիրություն, երկրաֆիզիկական և հանքավայրերի որոնման աշխատանքներ
«ԵՊՀ ուսանողական ծառայություններ» ՍՊԸ	100%	14.03.2016թ.	Ուսանողներին տարբեր ծառայությունների մատուցում

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Համախմբման հիմքերը

Խմբի ֆինանսական հաշվետվությունները համախմբում են մայր ընկերության և իր բոլոր դուստր ընկերությունների՝ 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվությունները: Բոլոր դուստր ընկերությունների հաշվետու ամսաթիվը դեկտեմբերի 31-ն է:

Համախմբման ժամանակ Խմբի ընկերությունների միջև բոլոր գործարքները և մնացորդները բացառվում են, ներառյալ Խմբի ընկերությունների միջև գործարքների արդյունքում չվաստակած օգուտները և չկրած վնասները: Երբ ակտիվի ներխմբային վաճառքից առաջացող չկրած վնասը համախմբման ժամանակ հակադարձվում է,

հիմքում ընկած ակտիվը նաև ենթարկվում է արժեզրկվածության գծով ստուգման՝ Խմբի տեսանկյունից:

Տարվա ընթացքում ձեռք բերած կամ օտարած դուստր ընկերությունների շահույթը կամ վնասը և այլ համապարփակ արդյունքը ճանաչվում են ձեռքբերման ամսաթվից կամ մինչև օտարման ամսաթիվը, որը կիրառելի է:

Խումբը դուստր ընկերությունների ընդհանուր համախառն եկամուտը կամ վնասը բաշխում է մայր ընկերության սեփականատերերի և չվերահսկող բաժնեմասերի միջև՝ առաջնորդվելով սեփականության համապատասխան բաժնեմասով:

3.2 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Խմբի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը.

	2025թ.	**2024թ.**
ԱՄՆ դոլար	381.36	396.56
Եվրո	449.01	413.89
Ռուբլի	4.87	3.71

Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը, բացառությամբ իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածների, որոնք վերահաշվարկվում են իրական արժեքի չափման օրվա դրությամբ գործող փոխարժեքով:
Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի արդյունքում: Իրական արժեքով արտահայտված ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ներառվում են ժամանակաշրջանի արդյունքում, բացառությամբ այն ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած տարբերությունների, որոնց վերաբերող օգուտը կամ վնասը ճանաչվում է ուղղակիորեն զուտ ակտիվներում:

Խմբի ակտիվներն ու պարտավորությունները վերահաշվարկվում են դրամից հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ գործող փոխարժեքով: Եկամտային և ծախսային հոդվածները վերահաշվարկվում են՝ օգտագործելով ժամանակաշրջանի միջին փոխարժեքը:

3.3 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

Հող, շենքեր և շինությունները, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված են վերագնահատված արժեքով, որը իրենից ներկայացնում է վերագնահատման օրվա դրությամբ հիմնական միջոցի իրական արժեքը՝ հանած հետագա կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները: Ցանկացած կուտակված մաշվածություն վերագնահատման օրը բացառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքից և ակտիվի վերագնահատված արժեքում ներկայացվում է զուտ արժեքը: Վերագնահատումներն իրականացվում են բավարար պարբերականությամբ անկախ գնահատողների կողմից այնպես, որ հաշվեկշռային արժեքն էականորեն չտարբերվի հաշվետու ամսաթվի դրությամբ իրական արժեքից:

Հիմնական միջոցների վերագնահատումից արժեքի աճը վերագրվում է այլ համապարփակ եկամուտներին և արտացոլվում է սեփական կապիտալում որպես վերագնահատման պահուստ: Սակայն, եթե այդ աճը վերականգնում է նույն ակտիվի նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, այն ճանաչվում է շահույթում կամ վնասում որպես եկամուտ այն չափով, որով նախկինում նվազումը ճանաչվել էր որպես ծախս: Երբ հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն չափով, որը գերազանցում է նույն ակտիվի գծով նախորդ վերագնահատումից առաջացած վերագնահատման աճը:

Վերագնահատումից աճը ճանաչվում է կուտակված շահույթում Ընկերության կողմից ակտիվի օգտագործմանը զուգահեռ: Կուտակված շահույթում ճանաչված վերագնահատումից աճը իրենից ներկայացնում է ակտիվի վերագնահատված հաշվեկշռային արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության և ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության տարբերությունը: Վերագնահատված հիմնական միջոցի միավորի իրացման կամ դուրսգրման դեպքում վերագնահատման պահուստում դրա գծով առկա վերագնահատումից աճը ուղղակիորեն վերագրվում է կուտակված շահույթին:

Հիմնական միջոցների այլ հոդվածները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և

վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր և շինություններ	-	100 տարի
Կառուցվածքներ	-	20 տարի
Մեքենաներ և սարքավորումներ և փոխանցող հարմարանքներ	-	5 - 20 տարի
Տրանսպորտային միջոցներ	-	5 - 20 տարի
Տնտեսական գույք	-	5 - 20 տարի
Թանգարանային գույք	-	3 - 5 տարի

Քանի որ հողի համար հնարավոր չէ որոշել վերջավոր օգտակար ծառայության ժամկետ, համապատասխան հաշվեկշռային արժեքը չի ամորտիզացվում:

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Խմբի կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

3.4 Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝օգտագործելով առաջին մուտք՝ առաջին ելք (ԱՄԱԵ) մեթոդը, և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

3.5 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Խումբը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային

իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով հաշվառվող,
- իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- իրական արժեքով չափվող՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Խմբի՝ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, արտացոլված են ֆինանսական ծախսերում և շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում: Խմբի ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 21.2-ում:

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները

բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով).

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ

զեղչման ազդեցությունը աննշան է, զեղչում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Խմբի դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային դեբիտորական պարտքերը և այլ դեբիտորական պարտքերի մեծամասնությունը:

Ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով

Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են «հավաքագրման համար պահվող» կամ «հավաքագրման և վաճառքի համար պահվող» բիզնես մոդելներից տարբեր մոդելի շրջանակներում, դասակարգվում են որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով: Հետագայում, անկախ բիզնես մոդելից, բոլոր այն ֆինանսական ակտիվները, որոնց պայմանագրային դրամական հոսքերը չեն հանդիսանում միայն մայր գումարի և հաշվարկված տոկոսի մարում, հաշվառվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Բոլոր ածանցյալ ֆինանսական գործիքները դասակարգվում են այս կատեգորիայում, բացառությամբ հեջավորման գործիքների, որոնց համար գործում են հեջավորման հաշվառմանը ներկայացվող պահանջները:

Այս կատեգորիան ներառում է նաև ներդրումը սեփական կապիտալում: Խումբը հաշվառում է ներդրումը իրական արժեքով: Իրական արժեքը որոշվել է ՖՀՄՍ 9-ի պահանջներին համապատասխան, որը չի թույլ տալիս սկզբնական արժեքով չափումը:

Այս կատեգորիայում դասակարգված ակտիվները չափվում են իրական արժեքով՝ օգուտը կամ կորուստները ճանաչելով շահույթում կամ վնասում: Այս կատեգորիայում դասակարգված ֆինանսական ակտիվների իրական արժեքը որոշվում է գործող շուկայի գործարքներին հղում կատարելով կամ, այն պարագայում, երբ առկա չէ գործող շուկա՝ կիրառելով գնահատման մեթոդ:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչելու համար ՖՀՄՍ 9-ում արժեզրկմանը ներկայացված պահանջներում օգտագործվում է ապագային առնչվող տեղեկատվություն՝ «Ակնկալվող պարտքային կորուստների մոդելը»: ՖՀՄՍ 9-ի պահանջների շրջանակներում ընդգրկվող գործիքները ներառում են տրված վարկերը և փոխառային տիպի այլ ֆինանսական ակտիվները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով և իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքում, առևտրային դեբիտորական պարտքերը, պայմանագրային ակտիվները որոնք ճանաչվել և չափվել են ՖՀՄՍ 15-ի համաձայն և վարկային պարտավորությունները և որոշ ֆինանսական երաշխավորության պայմանագրերը (թողարկողի համար), որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթում կամ վնասում:

Պարտքային կորուստների ճանաչումը այլևս կախված չէ Խմբի՝ պարտքային կորուստը բնորոշող իրադարձության սկզբնական բացահայտումից: Փոխարենը, պարտքային ռիսկը գնահատելիս և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Խումբը դիտարկում է տեղեկատվության ավելի ընդլայնված զանգված՝ ներառյալ անցյալ իրադարձությունները, ընթացիկ պայմանները, խելամիտ և հիմնավորված կանխատեսումները, որոնք ազդեցություն ունեն գործիքի ապագա դրամական հոսքերի ակնկալվող հավաքագրելիության վրա:

Առաջընթաց գնահատման մոտեցումը կիրառելիս առանձնացվում են հետևյալները.

- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն չեն վատթարացել կամ ունեն ցածր պարտքային ռիսկ («Փուլ 1») և
- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն վատթարացել են և որոնց պարտքային ռիսկը ցածր չէ («Փուլ 2»):

«Փուլ 3»-ը ընդգրկում է այն ֆինանսական ակտիվները, որոնց մասով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա են արժեզրկման օբյեկտիվ ապացույցներ:

Առաջին դասի ակտիվների համար ճանաչվում են «12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները», մինչդեռ «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները» ճանաչվում են երկրորդ դասի ակտիվների համար: Ակնկալվող պարտքային կորուստների չափումը որոշվում է ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամկետի պարտքային կորուստների հավանականության միջին կշռված գնահատումով:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Խումբը հաշվառում է առևտրային և այլ դեբիտորական պարտքերը և պայմանագրային ակտիվները օգտվելով պարզեցված մոտեցումից և կորստի գծով պահուստը ձևակերպում է որպես գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ: Դրանք իրենցից ներկայացնում են պայմանագրային դրամական հոսքերի ակնկալվող դադարեցումները՝ հաշվի առնելով ֆինանսական ակտիվի գործողության ժամկետի ամբողջ ընթացքում ցանկացած պահի չմարվելու հնարավորությունը: Ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելիս Խումբն օգտագործում է պահուստի մատրիցան՝ ելնելով պատմական փորձից, արտաքին ցուցանիշներից և ապագային առնչվող տեղեկատվությունից

Խումբը գնահատում է առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկումը հավաքական հիմունքով, համաձայն որի Պահուստավորման սանդղակը հիմնվում է Խմբի պատմական կորստի դրույքաչափերի վրա՝ ճշգրտված ապագա սպասվող դեպքերով: Խումբը դեբիտորական պարտքերի արժեզրկումները ճանաչում է ներքոնշյալ դրույքներով, որոնք կարող են հետագայում փոխվել՝ դեբիտորական պարտքերի հետագա արժեզրկումների արդյունքում:

Դեբիտորական պարտքերի պայմանագրային ժամկետայնության օրեր	**Արժեզրկման տոկոս**
Մինչև 90 օր	10%
91-180 օր	20%
181-270 օր	50%
271 և ավել	100%

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Խմբի ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը և փոխառությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը: Խմբի ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են ծանոթագրություն 21.2-ում:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

3.6 Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները և դրամական միջոցները՝ ճանապարհին:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Խումբը դասակարգում է ներդրումները որպես դրամական միջոցների համարժեքներ այն դեպքում, եթե դրանք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

3.7 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

(ա) աշխատավարձերը և պարգևավճարները,

(բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,

(գ) քաղաքացիաիրավական հիմունքներով վճարված եկամուտները

3.8 Շնորհներ և նվիրատվություններ

Դրամաշնորհների մի մասը ստացվում են որոշակի նպատակներով և նախատեսված չեն Խմբի ընդհանուր օգտագործման համար: Այս դրամաշնորհները չեն ճանաչվում, մինչև Խմբի կողմից դրան կից բոլոր պայմանների կատարումը:

Շնորհները, որոնց հիմնական պայմանը Խմբի կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ և սիստեմատիկորեն փոխանցվում են շահույթ կամ վնաս՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Այլ շնորհները ճանաչվում են սիստեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են:

Շնորհը, որը հատկացվում է Խմբին՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

Դրամաշնորհների մի մասը հասանելի են ընդհանուր նպատակների համար, ինչպես սահմանված է Խմբի կառավարման փաստաթղթերում: Սույն դրամաշնորհները ճանաչվում են որպես հասույթ, երբ դառնում են ստացման ենթակա:

4 Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Հողամասեր	Շենքեր և շինություններ	Կառուցվածքներ	Մեքենաներ և սարքավորումներ և փոխանցող հարմարանքներ	Տրանսպորտային միջոցներ	Տնտեսական գույք	Թանգարանային գույք	Անավարտ շինարարություն	Ընդամենը
Սկզբնական արժեք									
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	14,010,812	60,967,881	368,032	4,219,418	324,633	4,664,199	112,336	1,172	84,668,483
Ավելացում	-	-	-	826,757	15,300	748,483	-	-	1,590,540
Կապիտալացում	-	479,139	37,257	28,303	-	-	-	-	544,699
Վերագնահատումից արժեքի աճ/(նվազում)	17,883,101	(7,311,591)	-	-	-	-	-	-	10,571,510
Ներքին շարժ	-	(126,637)	3,754	(54,273)	(63,058)	295,214	(62,300)	7,300	-
Դուրս գրում	-	-	-	(79,784)	-	(203,754)	(497)	-	(284,035)
Օտարում	-	-	-	(4,693)	(15,119)	(109,463)	-	-	(129,275)
2024թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ	31,893,913	54,008,792	409,043	4,935,728	261,756	5,394,679	49,539	8,472	96,961,922
Ավելացում	-	1,243,785	-	1,615,771	12,969	822,820	-	1,790	3,697,135
Օտարում	-	-	-	(294)	-	(17,080)	-	-	(17,374)
Դուրս գրում	-	-	-	(70,311)	(8,950)	(224,541)	(7)	-	(303,809)
Արժեզրկում	-	-	-	-	-	(487,934)	-	-	(487,934)
Նեքին շարժ	-	8,100	-	1,696	-	(1,696)	-	(8,100)	-
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	31,893,913	55,260,677	409,043	6,482,590	265,775	5,486,248	49,532	2,162	99,849,940

Հազար դրամ	Հողամասեր	Շենքեր և շինություններ	Կառուցվածքներ	Մեքենաներ և սարքավորումներ և փոխանցող հարմարանքներ	Տրանսպորտային միջոցներ	Տնտեսական գույք	Թանգարանային գույք	Անավարտ շինարարություն	Ընդամենը
Կուտակված մաշվածություն									
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	-	8,320,580	232,677	2,545,665	151,850	3,383,042	106,775	-	14,740,589
Տարվա հաշվարկ	-	1,032,622	18,916	267,732	19,189	324,425	-	-	1,662,884
Ներքին շարժ	-	(136,358)	308	243,218	6,022	(56,451)	(56,739)	-	-
Դուրս գրում	-	-	-	(79,784)	-	(203,754)	(497)	-	(284,035)
Օտարումներ	-	-	-	(2,448)	(15,119)	(104,586)	-	-	(122,153)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	9,216,844	251,901	2,974,383	161,942	3,342,676	49,539	-	15,997,285
Տարվա հաշվարկ	-	765,764	20,377	424,759	20,794	471,830	-	-	1,703,524
Ներքին շարժ	-	-	-	28	-	(28)	-	-	-
Դուրս գրում	-	-	-	(70,311)	(8,950)	(224,541)	(7)	-	(303,809)
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	9,982,608	272,278	3,328,859	173,786	3,589,937	49,532	-	17,397,000
Հաշվեկշռային արժեք									
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	31,893,913	44,791,948	157,142	1,961,345	99,814	2,052,001	-	8,472	80,964,635
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**31,893,913**	**45,278,069**	**136,765**	**3,153,731**	**91,989**	**1,896,311**	**-**	**2,162**	**82,452,940**

Ամբողջությամբ մաշված հիմնական միջոցներ

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների ցանկում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվների սկզբնական արժեքը կազմում է 5,312,207 հազար դրամ (2024թ. 5,008,094 հազար դրամ):

Հիմնական միջոցների վերագնահատում

Խմբի հողը, շենքերն ու շինությունները հաշվառվում են վերագնահատված արժեքով: Խմբի հողը, շենքերի և շինությունների իրական արժեքը վերջին անգամ որոշվել է 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ անկախ գնահատող ընկերության կողմից:

Գրավադրված հիմնական միջոցներ

2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը գրավադրված հիմնական միջոցներ չուներ:

Հիմնական միջոցների ավելացումներ

2025 թ-ին Հիմնադրամը Հայաստանի Հանրապետության կառավարությունից նվիրատվություն է ստացել սարքավարումներ 1,075,814 հազար դրամ արժողությամբ՝ Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններին և գիտական կազմակերպություններին ժամանակակից սարքավորումներով վերազինելու գործունեության միջոցառումների ծրագրերի շրջանակում :

5 Ոչ նյութական ակտիվներ

Հազար դրամ	Համակարգ-չային ծրագրեր	Լիցենզիաներ	Արտոնագրեր	Այլ ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք					
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	31,706	1,805	1,335	65,470	100,316
Ավելացում	7,522	-	-	8,558	16,080
Օտարում	(84)	-	(228)	(1,142)	(1,454)
2024թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ	39,144	1,805	1,107	72,886	114,942
Ավելացում	10,429	-	2,575	-	13,004
Օտարում	(1,762)	-	(62)	(377)	(2,201)
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**47,811**	**1,805**	**3,620**	**72,509**	**125,745**
Կուտակված մաշվածություն					
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	27,376	267	1,168	53,510	82,321
Տարվա հաշվարկ	1,986	66	4	8,867	10,923
Օտարումներ	(75)	-	(228)	-	(303)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	29,287	333	944	62,377	92,941

Հազար դրամ	Համակարգ-չային ծրագրեր	Լիցենզիաներ	Արտոնագրեր	Այլ ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Տարվա հաշվարկ	3,612	56	718	7,355	11,741
Օտարումներ	(1,686)	-	(62)	(377)	(2,125)
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	31,213	389	1,600	69,355	102,557
Հաշվեկշռային արժեք					
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	9,857	1,472	163	10,509	22,001
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**16,598**	**1,416**	**2,020**	**3,154**	**23,187**

6 Ներդրումային Արժեթղթեր

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Պետական պարտատոմսեր	4,960,532	509,225
	4,960,532	**509,225**

Պետական պարտատոմսերն ունեն 2-ից մինչև 12 տարի մարման ժամկետ և 9.57% միջին տոկոսադրույք (2024թ.՝ 8 տարի մարման ժամկետ և 9.75% տոկոսադրույք)

7 Պաշարներ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հումք և նյութեր	65,025	100,825
Շինանյութեր	17,525	46,972
Գրենական պիտույքներ	93	37,094
Ապրանքներ	32,694	30,072
Արտադրանք	-	26,790
Վառելիք	9,518	11,907
Այլ	2,501	14,468
	127,356	**268,128**

8 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական ակտիվներ		
Առևտրային դեբիտորական պարտքեր	1,187,275	1,126,944
Դեբիտորական պարտքեր դրամաշնորհների գծով	-	-
Այլ Դեբիտորական պարտքեր	33,543	183,218
	1,220,818	1,310,162
Առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստ	(586,617)	(179,011)
	634,201	1,131,151
Ոչ ֆինանսական ակտիվներ		
Տրված կանխավճարներ	250,495	199,436
Դեբիտորական պարտքեր բյուջեից	53,982	46,240
	304,477	245,676
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	**938,678**	**1,376,827**

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մնացորդ տարվա սկիզբ	(179,011)	(107,206)
Զուտ շարժ	(695,907)	(149,604)
Դեբիտորական պարտքի դուրսգրում	288,301	77,799
Մնացորդ տարվա վերջ	**(586,617)**	**(179,011)**

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում: Տե՛ս ծանոթագրություն 22(ա)՝ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժույթների բացահայտման համար:

9 Ավանդներ բանկերում

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ավանդ ազգային արժույթով	890,605	632,147
Ավանդ արտարժույթով	132,714	138,426
	1,023,319	**770,573**
Որից՝		
Երկարաժամկետ ավանդ	253,552	-
Կարճաժամկետ ավանդ	769,767	770,573
	1,023,319	**770,573**

Ավանդներն ունեն 12-18 ամիս մարման ժամկետ և տարեկան 9.25% ազգային արժույթով ավանդների համար և 4-4.5% արտարժույթով ավանդերի համար (2024թ՝ մինչև 1 տարի մարման ժամկետ և տարեկան 9.25% ազգային արժույթով ավանդների համար և 4-4.5% արտարժույթով ավանդերի համար):

Տես ծանոթագրություն 22(ա) կարճաժամկետ ավանդներների մնացորդների արժույթների բացահայտման համար:

10 Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Բանկային հաշիվներ	2,820,000	588,793
Ցպահանջ ավանդներ	1,188,807	8,748,446
	4,008,807	**9,337,239**

Դրամական միջոցները և դրանց համարժեքները տեղաբաշխված են հայկական բանկերում:

Տես ծանոթագրություն 22(ա) դրամարկղում և բանկերում մնացորդների արժույթների բացահայտման համար:

11 Շնորհներ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ոչ ընթացիկ պարտավորություններ		
Ակտիվներին վերաբերող շնորհներ	6,687,905	5,388,355
	6,687,905	**5,388,355**
Ընթացիկ պարտավորություններ		
Եկամուտներին վերաբերող շնորհներ	1,334,988	1,545,685
	1,334,988	**1,545,685**

Ակտիվներին վերաբերող շնորհները հիմնականում Հայաստանի Հանրապետության կառավարությունից է՝ հիմնական միջոցների գծով, շնորհներից եկամուտը ճանաչվում է եկամուտ համապատասխան հիմնական միջոցների շարժին համապատասխան:

2025թ դեկտեմբերի 31 դրությամբ Եկամուտներին վերաբերող շնորհներից 723,864 հազարը Հայաստանի Հանրապետության կառավարությունից է (2024թ դեկտեմբերի 31 դրությամբ՝ 656,358 հազար դրամ):

12 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական պարտավորություններ		
Առևտրային կրեդիտորական պարտքեր	253,655	260,215
Կրեդիտորական պարտքեր աշխատակիցներին	15,973	20,559
Այլ կրեդիտորական պարտքեր	29	29,471
	269,657	310,245
Ոչ ֆինանսական պարտավորություններ		
Ստացված կանխավճարներ ուսման վարձի գծով	2,051,425	1,833,497
Այլ կանխավճարներ	179,784	24,203
Վճարվելիք հարկեր և տուրքեր	303,955	150,248
	2,535,164	2,007,948
	2,804,821	**2,318,193**

Տես ծանոթագրություն 22(ա) առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի արժույթների բացահայտման համար:

13 Պահուստներ

Հազար դրամ	1 հունվարի 2025թ.	Նվազեցում	31 դեկտեմբերի 2025թ.
Չօգտագործված արձակուրդային պահուստ	423,068	(50,176)	372,892

	1 հունվարի 2024թ.	Ավելացում	31 դեկտեմբերի 2024թ.
Չօգտագործված արձակուրդային պահուստ	395,856	27,212	423,068

14 Եկամուտներ

Հազար դրամ	2025թ.	2024թ.
Ուսման վարձերից	7,777,530	7,334,274
Եկամուտին վերաբերող շնորհներ	6,746,416	5,321,742
	14,523,946	**12,656,016**

Խմբի եկամուտները հիմնականում գոյանում են հիմնադրամի կողմից ուսումնական ծառայությունների մատուցումից և ստացված շնորհներից:

Ուսումնական ծառայություններից ստացված եկամուտը ճանաչվում է ժամանակի ընթացքում ուսումնական ծառայությունների մատուցման ժամանակացույցին համապատասխան:

Եկամուտներին վերաբերող շնորհները ճանաչվում է եկամուտ այն նույն ժամանակահատվածում երբ համապատասխան ծախսերը կատարվել են:

15 Այլ եկամուտ

Հազար դրամ	2025թ.	2024թ.
Հյուրերի տան և հանրակացարանային ծառայություններից	294,471	263,945
Լրացուցիչ կրթական դասընթացներից և քննություններից	268,966	354,829
Այլ եկամուտ	42,645	123,195
	606,082	**741,969**

16 Գրասենյակային ծախսեր

Հազար դրամ	2025թ.	2024թ.
Ծառայությունների ձեռքբերում	265,354	287,303
Կոմունալ ծախսեր	264,550	281,129
Նյութածախս	244,948	124,364
Չփոխհատուցվող հարկերից ծախսեր	102,060	107,736
Նորոգում և սպասարկում	45,985	72,180
Ֆինանսավորումների գծով ծախսեր	75,016	58,517
Վարձակալության գծով ծախսեր	13,128	57,406
Աուդիտ և խորհրդատվություն	14,903	25,904
Պրակտիկայի կազմակերպման ծախսեր	16,477	15,769
Գրասենյակային ծախսեր	10,472	12,081
Բանկային ծախսեր	3,830	2,924
Թերթեր, ամսագրեր	13,322	1,287
Այլ	15,676	325
	1,085,721	**1,046,925**

17 Արժեզրկման կորուստ

Հազար դրամ	2025թ.	2024թ.
Դեբիտորական պարտքերի արժեզրկում	695,907	149,604
Հիմնական միջոցների արժեզրկում	487,934	-
Պաշարների արժեզրկում	162,458	-
	1,346,299	**149,604**

18 Ֆինանսական եկամուտ

Հազար դրամ	2025թ.	2024թ.
Տոկոսային եկամուտ բանկային հաշիվներից և ավանդներից	701,337	845,778
	701,337	**845,778**

19 Շահութահարկի գծով (ծախս)/փոխհատուցում

Հազար դրամ	2025թ.	2024թ.
Ընթացիկ տարվա հարկի գծով ծախս	(295,773)	(261,226)
Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների փոփոխություններ՝ ժամանակավոր տարբերությունների առաջացման և հակադարձման գծով	(132,924)	265,046
Ընդամենը (ծախս)/փոխհատուցում շահութահարկի գծով	**(428,697)**	**3,820**

Արդյունավետ հարկային դրույքի համադրում դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	%	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	%
Շահույթ նախքան շահութահարկի գծով հարկումը	(933,382)		(454,004)	
Շահութահարկ՝ հարկի կիրառելի դրույքաչափով	(168,009)	18%	(81,721)	18%
Չնվազեցվող ծախսեր/(չհարկվող եկամուտ)	(260,688)	38%	85,541	-17%
	(428,697)	**56%**	**3,820**	**1%**

Հետաձգված հարկերի շարժը ներկայացված է ստորև.

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	1 հունվարի 2025թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ եկամտում ճանաչված	31 դեկտեմբերի 2025թ.
Հետաձգված հարկային ակտիվներ				
Պաշարներ	22,482	(22,482)	-	-
Չօգտագործված արձակուրդային օրերի գծով պահուստ	76,152	(9,032)	-	67,120
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	32,222	73,369	-	105,591
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվներ	130,856	41,855	-	172,711
Հետաձգված հարկային պարտավորություններ				
Հիմնական միջոցներ	12,969,568	193,664	-	13,163,232

Հազար դրամ	1 հունվարի 2025թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ եկամտում ճանաչված	31 դեկտեմբերի 2025թ.
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	18,885	(18,885)	-	-
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություններ	12,988,453	174,779	-	13,163,232
Զուտ արդյունք - հետաձգված հարկային պարտավորություն	**(12,857,597)**	**(132,924)**	**-**	**(12,990,521)**

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	1 հունվարի 2024թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ եկամտում ճանաչված	31 դեկտեմբերի 2024թ.
Հետաձգված հարկային ակտիվներ				
Պաշարներ	20,341	2,141	-	22,482
Չօգտագործված արձակուրդային օրերի գծով պահուստ	57,483	18,669	-	76,152
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	-	32,222	-	32,222
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվներ	77,824	53,032	-	130,856
Հետաձգված հարկային պարտավորություններ				
Հիմնական միջոցներ	11,297,623	(230,899)	1,902,844	12,969,568
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	-	18,885	-	18,885
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություններ	11,297,623	(212,014)	1,902,844	12,988,453
Զուտ արդյունք - հետաձգված հարկային պարտավորություններ	**(11,219,799)**	**265,046**	**(1,902,844)**	**(12,857,597)**

20 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

20.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Խումբն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Իրական արժեքի չափումը

Այն պարագայում, երբ գործող շուկաների տվյալները բացակայում են, ֆինանսական գործիքների իրական արժեքը և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքը որոշելու համար ղեկավարությունը օգտագործում է գնահատման մեթոդներ: Այս գործընթացը ընդգրկում է գնահատումների և ենթադրությունների մշակում, որոնք համահունչ են նրա հետ, թե ինչպես շուկայի մասնակիցները կգնահատեին գործիքը: Ղեկավարությունը իր ենթադրությունների համար որպես հիմք է վերցնում դիտարկելի տեղեկատվությունը, սակայն այդպիսի տեղեկատվությունը միշտ չէ, որ հասանելի է: Այս պարագայում ղեկավարությունը օգտագործում է հասանելի լավագույն տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել հաշվետու ամսաթվի դրությամբ իրական գներից, որոնք կարող են ստացվել պարզած ձեռքի գործարքիպարագայում (տե՛ս ծանոթագրություն 23):

21 Ֆինանսական գործիքներ

21.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3-ում:

21.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական ակտիվներ		
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Ներդրումային արժեթղթեր	4,960,532	509,225
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	634,201	1,131,151

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ավանդներ բանկերում	1,023,319	770,573
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	4,008,807	9,337,239
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**10,626,859**	**11,748,188**
Ֆինանսական պարտավորություններ		
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ		
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	269,657	310,245
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**269,657**	**310,245**

22 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Խումբը ենթարկվում է զանազան ռիսկերի, որոնք կապված են ֆինանսական գործիքների հետ: Այս ռիսկերն են

- շուկայական ռիսկը,
- պարտքային ռիսկը
- իրացվելիության ռիսկը:

Խումբը ներգրավված չէ սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքուվաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Խումբը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

Ֆինանսական ռիսկի գործոններ

1) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը Խմբի եկամտի կամ նրա ֆինանսական գործիքների արժեքի փոփոխության ռիսկն է շուկայական գների, այդ թվում արտարժույթի փոխարժեքների, տոկոսադրույքների և բաժնետոմսերի գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանն ընդունելի սահմաններում միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

ա) Արտարժութային ռիսկ

Արտարժույթի ռիսկի նկատմամբ Խմբի ենթարկվածությունը կապված է ֆունկցիոնալ արժույթից տարբեր արժույթով՝ հիմնականում ԱՄՆ դոլարով, եվրոյով արտահայտված գործարքների հետ:

Ենթարկվածությունն արտարժույթի ռիսկին

Ստորև ներկայացված է արտարժույթի ռիսկին Խմբի ենթարկվածությունը.

Հազար դրամ **2025թ.**

Հոդված	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Ռուբլի	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ					
Ներդրումային արժեթղթեր	4,960,532	-	-	-	4,960,532
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	634,201	-	-	-	634,201
Կարճաժամկետ ավանդներ բանկերում	890,802	132,517	-	-	1,023,319
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	3,495,112	166,942	288,578	58,175	4,008,807
Ընդամենը Ֆինանսական ակտիվներ	**9,980,647**	**299,459**	**288,578**	**58,175**	**10,626,859**
Ֆինանսական պարտավորություններ					
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	221,925	12,780	32,101	2,851	269,657
Ընդամենը Ֆինանսական պարտավորություններ	**221,925**	**12,780**	**32,101**	**2,851**	**269,657**
Զուտ ենթարկվածություն	9,758,722	286,679	256,477	55,324	10,357,202

Հազար դրամ **2024թ.**

Հոդված	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Ռուբլի	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ					
Ներդրումային արժեթղթեր	509,225	-	-	-	509,225
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	1,131,151	-	-	-	1,131,151
Կարճաժամկետ ավանդներ բանկերում	632,147	138,426	-	-	770,573
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	8,785,681	48,743	448,051	54,764	9,337,239
Ընդամենը Ֆինանսական ակտիվներ	**11,058,204**	**187,169**	**448,051**	**54,764**	**11,748,188**
Ֆինանսական պարտավորություններ					
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	310,245	2,006	4,179	26	316,456
Ընդամենը Ֆինանսական պարտավորություններ	**310,245**	**2,006**	**4,179**	**26**	**316,456**
Զուտ ենթարկվածություն	10,747,959	185,163	443,872	54,738	11,431,732

Զգայունության վերլուծություն

Դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի ողջամիտ հնարավոր արժևորումը ԱՄՆ դոլարի, Եվրոյի և Ռուբլու նկատմամբ կազդեր արտարժույթով արտահայտված ֆինանսական գործիքների չափման վրա և նախքան հարկումը շահույթի կամ վնասի վրա ստորև ներկայացված գումարների չափով: Վերլուծությունն իրականացվել է ենթադրելով, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ և հաշվի չառնելով կանխատեսվող առք ու վաճառքի ազդեցությունը:

Հազար դրամ		**ԱՄՆ դոլարի ազդեցությունը**	
	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս	**2025թ.**	**2024թ.**
Շահույթի վրա	10%	28,668	18,516
	-10%	(28,668)	(18,516)

Հազար դրամ		**Եվրոյի ազդեցությունը**	
	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս	**2025թ.**	**2024թ.**
Շահույթի վրա	10%	25,648	44,387
	-10%	(25,648)	(44,387)

Հազար դրամ		**Ռուբլու ազդեցությունը**	
	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս	**2025թ.**	**2024թ.**
Շահույթի վրա	10%	5,532	5,474
	-10%	(5,532)	(5,474)

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված արտերկրյա գործարքների ծավալից: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել Խմբի՝ արտարժութային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

2) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Խումբը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Խմբի պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական

ակտիվներից՝ ներառյալ բանկերում պահվող դրամական միջոցները և դրանց համարժեքները և առևտրային և այլ դեբիտորական պարտքերը:

Պարտքային ռիսկը կառավարվում է խմբային հիմունքով՝ ելնելով Խմբի պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունից և ընթացակարգերից:

ա) Առևտրային դեբիտորական պարտքեր

Խումբը բոլոր առևտրային դեբիտորական պարտքերի համար կիրառում է ՖՀՄՍ 9-ի պարզեցված մոդելը. «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում», քանի որ այս դեբիտորները չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ:

Ակնկալվող պարտքային կորուստները չափելիս առևտրային դեբիտորական պարտքերը գնահատվել են հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ: Դրանք խմբավորվել են՝ ելնելով ժամկետանց օրերից:

Առևտրային դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստների մեծությունը 2025թ. դեկտեմբերի 31-ի և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ զրո է:

3) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Խումբը կունենա դժվարություններ՝ իր ֆինանսական պարտավորությունների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնց մարումը պահանջում է դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի տրամադրում: Խմբի կողմից իրացվելիության ռիսկի կառավարման մոտեցումն է մշտապես ապահովել հնարավորինս բավարար իրացվելիություն պահանջվող ժամկետներում պարտավորությունները մարելու համար՝ թե սովորական, թե արտասովոր պայմաններում առանց անընդունելի վնասների հանգեցնելու կամ Խմբի հեղինակությունը վտանգի ենթարկելու:

Այս նպատակով Խումբը կատարում է դրամական միջոցների հոսքերի կարճաժամկետ կանխատեսումներ՝ հիմք ընդունելով գործառնական և ներդրումային գործունեության բնույթով պայմանավորված ֆինանսական պահանջները: Որպես կանոն, այս պահանջները կանխատեսվում են տարեկան և ամսական կտրվածքով: Խումբը ձգտում է ապահովել դրամական միջոցների և դրանց համարժեքների այնպիսի չափ, որը կգերազանցի ֆինանսական պարտավորություններից (բացառությամբ առևտրական կրեդիտորական պարտքերի) ակնկալվող դրամական միջոցների արտահոսքը հաջորդող 60 օրերի ընթացքում:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների պայմանագրային ժամկետայնությունը՝ ներառյալ տոկոսների հաշվարկված վճարումները:

2025թ.

Հազար դրամ	Մինչև 1 ամիս	1-12 ամիս	1-3 տարի	3-5 տարի	Ավելի քան 5 տարի	Ընդամենը համախառն դրամական հոսքեր	Հաշվեկշռային արժեք
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	269,657	-	-	-	-	269,657	269,657
	269,657					**269,657**	**269,657**

2024թ.

Հազար դրամ	Մինչև 1 ամիս	1-12 ամիս	1-3 տարի	3-5 տարի	Ավելի քան 5 տարի	Ընդամենը համախառն դրամական հոսքեր	Հաշվեկշռային արժեք
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	310,245	-	-	-	-	310,245	310,245
	310,245	**-**	**-**	**-**	**-**	**310,245**	**310,245**

23 Իրական արժեքի չափում

Խումբը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),

2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),

3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ)։)։

Խմբի պարբերական սկզբունքով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները 2025թ. դեկտմբերի 31-ի 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գտնվում են Իրական արժեքի չափման հիերարխիայի 2-րդ մակարդակում:

23.1 Ֆինանսական գործիքների իրական արժեքի չափում

Հետևյալ աղյուսակում ցույց են տրված նշված մակարդակները՝ պարբերական սկզբունքով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հիերարխիայում՝ 2025թ. դեկտմբերի 31-ի և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Հազար դրամ		**Իրական արժեքի չափման հիերարխիա**		
Նկարագրություն	**Հաշվեկշռային արժեքը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**	**Մակարդակ 1**	**Մակարդակ 2**	**Մակարդակ 3**
Ֆինանսական ակտիվներ				
Ներդրումային արժեթղեր	4,960,532	-	4,960,532	-
Ավանդներ	1,023,319		1,023,319	
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	1,220,818	-	1,220,818	-
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	4,008,807	-	4,008,807	-
Ֆինանսական պարտավորություններ				
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	269,657	-	269,657	-

Հազար դրամ		Իրական արժեքի չափման հիերարխիա		
Նկարագրություն	**Հաշվեկշռային արժեքը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**	**Մակարդակ 1**	**Մակարդակ 2**	**Մակարդակ 3**
Ֆինանսական ակտիվներ				
Ներդրումային արժեթղթեր	509,225	-	509,225	-
Ավանդներ	770,573	-	770,573	-
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	1,131,151	-	1,131,151	-
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	9,337,239	-	9,337,239	-
Ֆինանսական պարտավորություններ				
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	310,245	-	310,245	-

Բանկային հաշիվների հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

24 Պարտավորվածություններ

24.1 Իրավական պարտավորվածություններ

Աուդիտի եզրակացության օրվա դրությամբ Խումբը հանդես չի գալիս որպես պատասխանող և հայցվոր այնպիսի դատական գործընթացում, որը էական ազդոցություն կունենա ֆինանսական հաշվետվությունների վրա:

25 Պայմանականություններ

25.1 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության համաձայն:

25.2 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարության համոզմամբ՝ Խումբը բավարարում է շրջակա միջավայրի հետ

կապված Կառավարության պահանջները և վստահ է, որ շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանությունները ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

25.3 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Խումբը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Խմբի գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Խումբը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

26 Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են դրամական միջոցները դրամարկղում ու բանկերում: Ֆինանսական տարվա վերջի դրությամբ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում ներկայացված դրամարկղում և բանկերում մնացորդները կարող են համադրվել ֆինանսական վիճակի մասին հաշվետվության հոդվածների հետ հետևյալ կերպ.

Հազար դրամ	**2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**	**2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	4,008,807	9,337,239

27 Կապակցված կողմեր

Հիմնադրամի կառավարման մարմիններն են հոգաբարձուների խորհուրդը և ռեկտորը:

27.1 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հազար դրամ

Գործարքներ	**2025թ.**	**2024թ.**
Եկամուտին վերաբերվող շնորհներից եկամուտ	6,061,527	5,383,623
Ակտիվներին վերաբերվող շնորհներից եկամուտ	462,613	398,353

Հազար դրամ

Մնացորդներ	**2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**	**2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**
Կապակցված կողմեր		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	119,680	41,450
Եկամուտներին վերաբերող շնորհներ	723,864	656,358

27.2 Գործարքներ ղեկավարության և նրանց անմիջական ազգականների հետ

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը.

Հազար դրամ	**2025թ.**	**2024թ.**
Աշխատավարձ և պարգևատրումներ	162,636	183,069